Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Պ-1042[1]-02.12.2010-ԱՄ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ » ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի մայիսի 29-ի ՀՕ- 59 օրենքի /այսուհետ–՝ օրենք/ 32-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«ՀՈԴՎԱԾ 32. ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՏՈՒԿ
ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԿԱՄ ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Երեխային հատուկ դաստիարակչական հաստատություն է ուղարկում միայն դատարանը՝ տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացմամբ:
Երեխան առանց օրինական ներկայացուցչի համաձայնության հոգեբուժական հաստատություն կարող է հոսպիտալացվել միայն դատարանի վճռով՝ օրենքով նախատեսված դեպքերում – կարգով:

Հատուկ դաստիարակչական կամ բուժկանխարգելիչ կամ հոգեբուժական հաստատություններում գտնվող երեխան ունի հարգալից վերաբերմունքի, առողջության պահպանման, համապատասխան կրթության – մասնագիտական պատրաստության, ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների, հարազատների – այլ անձանց հետ տեսակցության – նամակագրության իրավունք:

Հատուկ դաստիարակչական հաստատության խնդիրն է երեխային ուղղելը – վերադաստիարակելը»:

ՀՈԴՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Երեխային իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ ՀՀ կառավարության առաջարկությունների մասին
օրենքի նախագծի վերաբերյալ առաջարկությունների մասին

Առաջարկության հեղինակը	Հոդվածը, կետը, ենթակետը	Առաջարկության բովանդակությունը	Առաջարկության վերաբերյալ հեղինակի եզրակացությունը
ՀՀ Կառավարություն	Նախագծի վերնագիրը	1. Վերնագրում «լրացում» բառը փոխարինել «փոփոխություն» բառով:	1. Առաջարկությունն ընդունված է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
	1-ին հոդվածը	2. 1-ին հոդվածում անհրաժեշտ է ճիշտ նշել օրենքի ընդունման թիվը «ՀՕ-59-Ն» փոխարինել «ՀՕ-59» թվով:	2. Առաջարկությունն ընդունված է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: